

կեղեցւոյ կալուածներէն մէկ երկու սենեակ վարձելով՝ հոն հայ աղջկանց գերմաներէն դաս կ'ոտայ որոնք հայերէն բառ մ'ալ չեն գիտեր»:

Ու անկումը կը շարունակուի այսպէս: Մեր դարուն սկիզբը պղտիկ ճիւղ մը կ'ըլլայ սակայն դպրոցը կարգի գնելու: Գուրաքէն հայ ուսուցիչ իսկ կը հրաւիրուի: Ընդունա՞յն: Հիւժածախտը բո՞յն դրած է անգամ մը:

Լեւոն Բարայեան որ 1910-ին այցելած է Սուչովա կը գրէ տեղւոյն դպրոցին մասին (Հայերը Մոլտաւիայում եւ Բուքովինայում, 1911, էջ 170). —

«Վարժարանում սովորում են 25 երկսեռ աշակերտներ, որտեղ աւանդում են հայերէն, գերմաներէն, ռումիներէն լեզուներ եւ միւս առարկաները: Այդ վարժարանը մի տեսակ նախապատրաստական դպրոց է հայ աշակերտների համար տեղական պետական գիմնազիան մտնելու: Այդտեղ սովորում են մեծ մասամբ աղքատ հայերի զաւակները, որոնք միջոց չունին տեղական գիմնազիա մտնելուց առաջ մասնաւոր ուսուցիչների մօտ նախապատրաստուելու: Գպրոցը ունի 3 ուսուցիչ, որոնցից մէկը Թիւրքիայից եկած մի հայ վարժուհի է եւ աւանդում է հայերէն: Սուչաւայի հայկական վարժարանն էլ կառավարւում է ազգային հոգաբարձութեան ձեռքով, եկեղեցական նպաստներով: Հայկական վարժարանի տարրական դասընթացն աւարտած աշակերտները հազիւ էին կարողանում իրանց միաքը հայերէն արտայայտել. դոնէ այդպիսի ապաւորութիւն թողեցին մեզ վրայ մի քանի աղաներ, որոնց հետ մենք խօսեցինք հայերէն: Բնական է որ այդ դպրոցից չեն օգտուում տեղական հարուստ հայերը, որոնք իրանց զաւակներին յանձնում են օտարազգի դաստիարակներին»:

Իսկ հիմա՞: Աչինչ: Շէնքերը միայն:

ՌՈՄԱՆԻ ՄԷՁ

ԺԹ. դարու առաջին քառորդին Ռոմանի հայերը արդէն ունէին իրենց դպրոցը Մոլտովայի ուրիշ հայաբնակ քաղաքներուն պէս: Հաւանաբար քահանան կամ տիրացուն էր որ կը կարդացնէր հայ տղաքը հոն ալ:

1841 Նոյեմբեր 8-ին է որ 163 համար իշ-

խանական հրովարտակ մը Ռոմանի դպրոցն ալ կ'օժտէ իր վերջնական կանոնադրութեամբ: Եաշի հայ դպրոցին ծրարներն է դերթէ որ կը կիրարկուի հոս ալ:

Այդ շրջանին դեռ փայտաչէն է հայոց դպրոցը:

Ռոմանի դպրոցին հոյակապ շէնքը կանդնել տուած է Թէոդորոս աղա Սողոմոնեան 1884-ին: Գպրոցին ճակատը գրուած յիշատակարանը կ'ըսէ. «Թէոդորոս Սողոմոնեան կառոյց ի հիմանց զայս երկսեռ վարժարան հայոց, արդեամբք եւ ծախիւք իւրովք. ջանիւք եւ աշխատասիրութեամբ որդւոյ իւրոյ Նիկոզայոս Թ. Սողոմոնեանի, յաւուրս Կարոլոս Ա. վեհափառ արքային Ռոմընիոյ: Հիմնադրութիւն վարժարանիս ի 1883 Մայիս 16, եւ բացումն նորին կրօնական հանդիսիւ ի 1884 Սեպտ. 30 Ռոման»:

Վարժարանի հիմնադիրը կտակած է նաեւ 50,000 ոսկի լէյ, որպէսզի անոր տոկոսովը Ռոմանցիք պահեն միշտ հայ ուսուցիչ մը եւ ուսուցչուհի մը:

Ի՞նչ երազներ երբեմն Ռոմանի մէջ ալ: Հո՞ն ալ մարդիկ երբեմն փորձած են հեղեղին դիմանալ:

«Աշակերտք ժողովրդական դպրոցին հայոց Ռոմանու» 1868 Յունիս 23-ին ձօն մը ըրած են «առ մեծապատիւ Տէր նախագահ ազգային կառավարութեան հայոց Ռոմանու, Տոնիկ ազա Սիմէոնեան»: Այդ ձօնին մէջ կ'ըսեն հայ դպրոցին աշակերտները. —

«... Թէ որ անաչառ նայուածք մի ձգեմք մեր ազգին ներկայ վիճակին վերայ՝ սրտերնիս տխուր քօղով մի կը ծածկուի, երբոր կը տեսնեմք այն հազարաւոր հայ տղայքը, որ անոք, անօգնական տգիտութեան խաւարին մէջ թաղուած կը մեծանան... առանց սովբելու ճանչնալ իրենց ազգութիւնը ու մայրենի լեզուն, որք սրբազան պէտք է լինին ամէն մարդու համար...»

«... Մարդս ամէն բանէն առաջ պարտական է իր ազգը սիրել եւ անոր անցեալ յիշատակներովը քաջալերուած՝ ամէն ջանք ի դործ դնել ազգութեան հիմունքը դարուց ի դարս անխախտելի պահելու:

«... Մեր ազգը իւր բնիկ հայրենիքէն,